

**«Միխիթար Սեբաստացի» կրթահամալիր**  
**Ստեղծողի մոբիլ դպրոց**  
**2014-2015 ուստարի**  
**4-5-րդ դասարաններ**

Բովանդակություն	IV		V	
	Շաբ.	Տար.	Շաբ.	Տար.
<b>Ընդհանուր բաղկացուցիչ</b>				
Մայրենի	5	180	5	180
Անգլերեն	3	108	3	108
Ռուսերեն	3	108	3	108
Մաթեմատիկա	4	144	4	144
Բնագիտություն	2	72	2	72
Հայրենագիտություն	2	72	2	72
Երաժշտություն, պար	2	72	2	72
Տեխնոլոգիա	2	72	2	72
Ֆիզկուլտուրա	3	108	3	108
Ընդհանուր պարապմունք		40		40
<b>Դպրոցական բաղկացուցիչ</b>				
Սովորողի ընտրած գործունեություն	4	144	4	144
Ընդամենը	30	1120	30	1120
<b>Անհատական բաղկացուցիչ</b>				
Ինքնակրթություն, տնային ուսումնական աշխատանք				
Լրացուցիչ կրթություն				

**Ուսումնական պլանի պարզաբանումներ**

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր), սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:
2. Կրթական ծրագիր ընդունվում է այն սովորողը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է ծրագիրը և սահմանված կարգով պայմանագիր կնքում ուսումնառության մասին:

3. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ դպրոցական պարտադիր, անհատական բաղկացուցիչներից: Սովորողը կարող է անհատական բաղկացուցիչը չընտրել:
4. Դասարանում սովորողների թիվը 20–25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12–22 հոգիանոց խմբերով:
5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
6. Ուսուցումը կազմակերպվում է տանը և դպրոցում ուսուցողական թվային միջոցներով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս անհատական նեթբուք–նոթբուք–պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է համացանցից, համակարգչից, էլեկտրոնային գրատախտակից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից, բջջային հեռախոսից ուսումնական նպատակներով օգտվելու հնարավորություն:
7. Մեդիագրադարանը, դպրոցի գրադարանը, դասավանդողների բլոգները սովորողին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
8. Սովորողն ունի ուսումնական բլոգ, որում սահմանված կարգով արտացոլվում է նրա ուսումնական գործունեությունը:
9. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, սովորողի ընտրությամբ գործունեության, երկարացված օրվա, լրացուցիչ կրթության) տարեկան ուսումնական օրացույցով. դրանցով որոշված ճամբարներին, ուսումնական ստուգատեսներին, ստեղծագործական հավաքներին, ծեսերին և տոներին սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:
10. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, մանկավարժական սեմինարներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:
11. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 թույլ տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:
12. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման նախագծերը սահմանված կարգով իրականացվում են ընդհանուր հանրակրթական դասընթացների ծրագրերով:
13. Դասընթացների ծրագրերը յուրացնելուն զուգահեռ սովորողը ձեռք է բերում անհրաժեշտ SS հմտություններ:
14. Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր:

15. «Հայրենագիտությունը» կազմակերպվում է ուսումնական ճամփորդությունների, բանահավաքչության, ուսումնական այլ նախագծերի ձևով, որպես բաղկացուցիչներ ներառում է նաև «Դիցաբանություն», «Պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացները:
16. Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա, բնագիտական, բնապահպանական, բույսերի և կենդանիների խնամքի նախագծերի ձևով:
17. Երաժշտության ուսուցումը կազմակերպվում է խմբային երգեցողության և պարի, երաժշտության ունկնդրման, համերգների, ծեսերի և տոների մասնակցության ուսումնական նախագծերի միջոցով:
18. «Տեխնոլոգիա» դասընթացը կազմակերպվում է խոհանոցային, բույսերի և կենդանիների խնամքի, դիզայնի, խեցեգործական, առողջության պահպանության, ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:
19. Ֆիզկուլտուրան 4-րդ դասարանում՝ մարմնամարզություն, լող, ծանոթացում 5-րդ դասարանում առաջարկվող մարզաձևերին: Լողալ կարողանալը 4-րդ դասարանն ավարտողի պարտադիր կարողություն է: Ֆիզկուլտուրան 5-րդ դասարանում սովորողի ընտրած մարզաձևն է. սովորողը մասնակցում է թիմային պարապմունքներին:
20. Տնային ուսումնական աշխատանքը սովորողի և ծնողի համաձայնեցված ընտրությամբ լրացուցիչ աշխատանք է:
21. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է գործունեություններից մեկը՝ մեդիալրագրողի, մաթեմատիկոսի, հայրենագետի, մարզիկի, երաժշտական, բուսաբան-կենդանաբանի, դիզայների, արհեստավորի, թատերական գործունեություն, բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործի:
22. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով:
23. Դասավանդողի բլոգին, դպրոցի, կրթահամալիրի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը, էլեկտրոնային հասցե ունենալ-վարելը սովորողի ուսումնական աշխատանքն է:
24. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով ընդմիջվում են ուրախ մարմնամարզությամբ:

25. Ուսումնական գործունեության կազմակերպումը թույլատրվում է հիգիենիկ, այդ թվում՝ բացօթյա, միջավայրում:
26. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների բաղկացուցիչն են:
27. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական տարածքի և գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունքն է:
28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով, տևական շրջան Հայաստանից բացակայած, տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողի համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով ուսուցում:
29. Սովորողի ուսումնական գործունեության կազմակերպման և արդյունքների մասին անհրաժեշտ տեղեկությունները սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
30. Մայրենի, մաթեմատիկա առարկաները գնահատվում են 10 միավորանոց համակարգով, իսկ մյուս առարկաները և դասընթացները՝ երկումիավորանոց համակարգով՝ հանձնած-չհանձնած: Գնահատումը կատարվում է սովորողի հրապարակային գործունեության արդյունքներով (ուսումնական բլոգ, ցուցադրություն, համերգ, ծեսերի-տոների մասնակցություն, ստուգատեսներ, ճամբարներ, ճամփորդություններ)□
31. Ուսումնական կիսամյակի վերջում անց է կացվում «Ես կարողանում եմ» ստուգատեսը:
32. Չորրորդ դասարանի վերջում սահմանված կարգով անցկացվում են ուսումնական աշխատանքի արդյունքների ուսումնասիրություններ: